

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ	<p>Մեղալը բաղկացած է չժանգոտվող ցինկապատ պողպատե կախիչից և դրան կապողակով ամրացած սկավառակից: Կախիչը ասեղային ամրակով:</p> <p>Սկավառակն արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (Էլեկտրոեռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 2.5մմ (շեղում՝ +/- 0.2մմ): Մեղալն իրենից ներկայացնում է շրջանակ: Մեղալի մեջտեղում կրակի լեզվակն է, որից առաջ խաչվում են հրդեհաշիջման փողրակները, որոնք էլ իրենց հերթին ծածկված են հրշեջ-փրկարարի</p>

արծաթագույն սաղավարտով: Խաչվող փողրակների
ներքևի ծայրը ծածկում է շրջանակի ներսից ելնող
դափնեպսակի հիմքը, որից ներքև շրջանակի եզրագծով
գրված են «ՀՐՇԵՁ-ՓՐԿԱՐԱՐ», իսկ վերին եզրագծով`
«ՀԱՅԱՍՏԱՆ» բառերը: Շրջանագծի ձախ և աջ
մասերում եզրագծով սև տառերով գրված է
«ԼԱՎԱԳՈՒՅՆ» բառը: Մեդալն ունի վեցանիստ
սեղանաձև կախիչ` 30X45 չափսերով, վրայից
ուղղանկյունաձև ոսկեգույն շերտածոդիկ` «ՀԱՅԱՍՏԱՆ»
մակագրուությամբ: Կախիչի դարձերեսին ամրացված է
մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Կախիչը
կարմիր է (CMYK 10;100;100;49), 1 ուղղահայաց 7 մմ
լայնությամբ կապույտ (CMYK 100;80;3;15) գույնով, որը
կախիչի ձախ եզրագծից ունի 3 մմ հեռավորություն:
Մեդալի դարձերեսին հորիզոնական 3 տողերով գրված
են «ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»
բառերը, 2 տողով` «MINISTRY OF EMERGENCY
SITUATIONS RA» բառերը և լազերային եղանակով
դաջվում է մեդալի համարը (սկսած 0704-ից):
Կատարվող գրառումների անվանանիշը 3.2 մմ
ուղղահայաց ուղղությամբ, տառատեսակը` Arial
Armenia: Մեդալների արտաքին տեսքը պետք է
համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին
տեսքին` ունենալով նույն համաձուլվածքը, ռելիեֆային
պատկերները, գրվածքները, ժապավենը և
գունավորումները: Թվային տեխնոլոգիաների
կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է
մեդալների միանմանությունը և չափսերի բարձր
ճշտությունը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի

				<p>շեղումը ոչ ավել քան 0.1 մմ: Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: Չի թույլատրվում` - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը մեդալների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մեդալի հետ տրվում է վկայական (համաձայն հրավերի էսքիզ 4):</p>
--	--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦДЦПЗР-ЦН-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
4				